

“Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ զայսպիսի աշխարհակործան եւ զսաստիկ հրամանն ի թագաւորէն, ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառսն աշխարհիս Հայոց. եւ իբրեւ հոգմախառն հուր ընդ եղէգն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի զամենայն բնակիչսն գաւառացն կորցեալք յիւրաքանչիւր բնակութեանց եւ արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրեւ զջոլիւս բազմութեան հօտից եւ անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատու, եւ զլայնանիստ դաշտն նորա լոյն ծագէ ի ծագ, քանդի ի ստորոտէ լեռանցն Գառնւոյ մինչ ի յեղրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, իսկ զերկայնութիւնն դովիմբ կշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ եւ յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ: Եւ էր նոր փոխեալ թուականն Հայոց եւ մտեալ ի ՌԾԴ. յառաջնում ամեանն Հայոց Նաւասարդի որ քշեցին զերկիրն: Եւ պարսիկ զօրքն, որք գնացին ի քշել զերկիրն, ուստի եւ հանեալ զԺողովուրդս, քշէին, եթէ ի գեղօրէից եւ թէ ի քաղաքացն զամենայն շէնս, զտունս եւ զբնակութիւնս հուրք այրեալ անխնայաբար հրկէզ առնէին: Այլ եւ զամբարս խոտոյ եւ զյարդի՝ զցորենոյ եւ զգարւոյ եւ զայլ պիտոյից, զամենայն այրեալ վատնէին: Այսպէս աւերեալ թափուր արարին զաշխարհն վասն զօրացն Օսմանցւոց՝ զի մի մնացէ ինչ ոռճիկ նոցա եւ վտանգեացին նոքա: Այլ եւ ելեալ Ժողովուրդքն զայն տեսեալ սրտակտուրք լիցին, եւ մի դարձցին յետս:”

Ահա այսպէս պարսկական վայրագ զօրքն ամայացնելով բովանդակ Հայոց երկիրը, բոլոր շինութիւնները կրակի ճարակ տալով, բոլոր